GAREGINYAN TEREZA 7002670085
Digitally signed by GAREGINYAN TEREZA 7002670085
Date: 2023.07.24

Բնագիտական մասնախմբի2022-2023

Ուստարվա տարեկան հաշվետվություն

Մասնախմբի նախագահ՝ Նարինե Մարդոյան

2022-2023 ուստարում մասնախումբն աշխատել է հետևյալ կազմով, հետևյալ դասարաններում՝

1. Խաչատրյան Գրիգոր- 7-րդ,8-րդ,9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ(Ֆիզիկա),8-րդ,9-րդ և 11-րդ(հանր.,երկրաչ)
2. Արմենուհի Մարդոյան–5-րդ,6-րդ, 7-րդ,8-րդ,9-րդ, 10-րդ, 11-րդ,12-րդ դասարաներ կենսաբանություն
3. Թերեզա Գարեգինյան– 7-րդ, 8-րդ,9-րդ, 10-րդ,11-րդ 12-րդ դասարաներ քիմիա
4. Մարինա Իգնատյան–6-11-րդ դասարաներ աշխարհագրություն
5. Աստղիկ Հարությունյան-1-ին,2-րդ,5-12-րդ դասարաններ ֆիրզկուլտուրա

Մասնախմբի բոլոր անդամներն աշխատել են առարկայական չափորոշիչներին համապատասխան, առաջնորդվել են թեմատիկ պլաններով, որոնք քննարկվել են մասնախմբի առաջին նիստում և հաստատվել տնօրենի կողմից։ Հաստատվել է նաև մասնախմբի նախագահի տարեկան աշխատանքային պլանը, որում ներառված են ուստարվա ընթացքում մասնախմբի գործունեության շրջանակներում նախատեսվող աշխատանքները։

Ելնելով ծրագրերի կատարողականությունից, դասարանների առանձնահատկություններից և պարապող ուսուցիչների առաջարկություններից՝ դպրոցական բաղադրիչ դասաժամեր են հատկացվել բնագիտական առարկաներին։

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տնօրինության կողմից ստուգվել է առարկայի դրվածքը դպրոցում. անց են կացվել ԳԹԿ-ի կողմից առաջադրված գրավոր աշխատանքներ 10-րդ դասարանում։

Այբ հիմնադրամի կողմից տրվել են թեստային աշխատանքներ 8-րդ և 9-րդ դասարաններում։ Անց է կացվել «Կենգուրու» ամենամյա մրցույթը, որին մասնակցել են տարբեր դասարանների աշակերտներ։

Պարբերաբար ստուգվել է ծրագրերի կատարողականությունը, գրավոր աշխատանքների քանակի և տեսակի ապահովումը։ Կատարել ենք դասալսումներ՝ փորձի փոխանակման, մեթոդական նորամուծությունների նպատակով, շտկել թերությունները։ Յուրաքանչյուր ամիս անցկացվել է մ/մ նիստ,որտեղ քննարկվել և վեր են հանվել թերությունները,դրանց նկատմամբ շտկումներ կատարելու ուղությամբ։Մասնախմբի անդամները համագործակցել են իրար հետ։Մասնակցել են հերթական պարտադիր վերապատրաստմանը, ինչպես նաև 5-րդ,7-րդ,10-րդ դասարանների նոր ՀՊՉ-ի վերապատրաստմանը։

Մ/մ նիստի ժամանակ անդամների կողմից ընթերցվել են զեկուցագրեր։Աշխատանքը գնահատվել է միջին,և անդամներով որոշել են էլ ավելի լայնածավալ աշխատանք կատարենլ՝ նախագծային աշխատանք կատարելով և բնագիտական առարկան էլ ավելի հետաքրքիր դարձնելով։

Մաթեմատիկայի օլիմպիադայի դպրոցական փուլին 21. 11. 23-ին մասնակցել են 6-11-րդ դասարանների 38 աշակերտներ ։

10-րդ դասարանում անցկացվել է բաց դաս «Անվտանգ համացանց» թեմայով (ուսուցչուհի՝Ն.Մարդոյան)։

Անց է կացվել բաց-դաս XI-րդ դասարանում «Ֆունկցիաների գրաֆիկների ձևափոխությունները» թեմայով (ուսուցչուհի՝ Գ. Խաչատրյան)։

9-րդ դասարանում անցկացվել է <<Սիրտ>> թեմայով բաց դաս(ուսուցչուհի՝ Ա.Մարդոյան)

10-րդ դասարան՝ <<Ազոտի դատավարությունը>>(ուսուցչուհի Թ. Գարեգինյան)